




ՏԱՂ Ս. ԽԱՉԻ

Նոր խորհուրդ կենաց բերուն
Բնաւից բոլորից համբաւ.
Գուշակ զարնայնոյ նըւազ
Ող հարաւային հընչուն:


Տունկ բարձրատարած ստեղծեալ
Տեսութիւն կենաց փայտին.
Արովբէապահակ զբախտին
Բացումն ամրացեալ ցանգոյն:

Պըտոյն քաղցրութեան առիթ
Գիր ազատութեան անջինջ.
Յաճուցիշ մեղաց սաստից
Շիղ աւետարեւր նոյեան.

Սանգուխք լուսեղէն կազմեալ
Տէր անգր հաստատեալ փառօր.
Վայրէջք անմարմին զուարթնոցն
Վերելք ի բարձունս անբաւ:

Փայտիցն որ ի ջուրն ազդեալ
ԶՂաբան նահանջէր հօտիւքն,
Նըշան Մովսէսի ձեռնին
Զիր աստուածեղէն հրաշխցն:

Որով բաժանեալ ըզճոփն
Անց և ճանապարհ գործէր:
Զնոյն հոգեբոցոյն տեսեալ
Յուպ և գաւազան յուսոյ:



Աստանօր կանգնեալ տեսաք
Փայտ կենաց ի մէջ երկրի,
Յորում բարձրացաւ փրկիչն
Զձեռս իւր տարածեալ ի նմա:

Գոչմամբ յօգնութիւն կարգայր
ԶՀայր՝ զերեցելոյ մարդոյն,
Իջեալ ի ստորինս երկրի
Զգոյնս աւերեաց բանիւ:


Ի խաւարային բանտէն
Զգերեալն ազատեաց սովաւ.
Ըզգլուխ վիշապին փըշրեաց
Կենարար խաշին իւրով:

Զմարդիկ վերացոյց ի կեանս
Փառաւորելով ըզՏէր,
ԶՀայր և զՄիածին Որդին
Սուրբ Հոգւովն, որ է օրհնեալ:

(Տղրմ. 1348)

Խորանագարդք 1319 ի
գըջագիր Աւետարանին:

(Մատ. Ս. Ղազարու)




ՏԱՂ ԳԵՂԵՅԻԿ

Ի

ՍՈՒՐԲ ԽԱՉՆ

Կենդանի է Տէրն
Ի վերայ խաշին
Խաշն էր զարգարեալ
Տէրունական մարմնով:
Գառն եղև ի խաշ
Տէրն ի զնունս եկեալ:
Յաւուր ուրբաթին
Ի յիննեբոց ժամին.
Հրէից ժողովեալ
ԶՏէրն ի խաշ հանեալ:
Զբան մարգարէից
Զայն կատարել կամիւ
Զքացախն և զլեղին
Զայն ճաշակել կամիւ:
Խաշէ իջանեմ,
Զէջս ի դրժիս առնեմ
Զդժիւքն աւերեմ
Զհոգին ազատ առնեմ:
Յերկինս համբառնամ
Ընդ աջմէ Հօր նստիմ
Դարձեալ կրկին դամ
Զձեզ նորոգել կամիմ:
Հոգւոյն ճշմարտի
Փառք յախանս ամէն:

(Տղրմ. 1555)



ՏԱՂ Ս. ԽԱՉԻ

Օրհնեալ ևս փայտ սուրբ փրկական
Միշտ բարեխօս ազդի մարդկան
Դու հրեշտակաց ընդունարան
Եւ Տեսան իւրեանց փառք սրբութեան:
Թաղաւորաց զէն յաղթութեան
Եւ իշխանաց յոյս քաջութեան
Զօրավարաց քաջ օգնական
Զօրաց նոցին յոյժ պահպան:
Եկեղեցւոյ փառք պերճութեան
Առաքելոց պարծանք նըշան
Մարգարէից հանդիսարան
Հայրապետաց պըսակ օժման:
Վարդապետաց քարոզ յուսման
Քահանայից շնորհք բաշխական
Նահապետաց վիզ և վահան
Վըրտանգելոց օժանդական:
Թագ կուսանաց վայելչութեան
Կնիք ամուսնաց պարկէշտութեան
Տղայոց յաւետ ևս պահպան
Դաստիարակ խմաստութեան:
Պարտեցելոց մեծ ապաստան
Նոյն նեղելոցն ևս օգնական
Հալածելոց տէր և պաշտպան
Փախուցելոց պատըսպարան:
Գանձ աղքատաց անդրժական
Անըզգամաց ևս զգոնարան,
Ըստահակաց խրատ գիտութեան,
Վայրապարաց լուծ նահանջման:
Ի ճանապարհ մեզ օգնական
Յիւս և ի մուտքս պահպան
Միշտ կենդանեացքս փրկութեան
Յոյս մեռելոցքս յարութեան:
Դիւաց ընդդէմ ահ պարտութեան
Անտացելոց զեղ ողջութեան
Մեղաւորաց ևս քաւարան
Եւ արդարոց ասպընջական:

(Տղրմ. 1686)